ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 107-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՐՑԱԽԻ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 13/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 122,6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 0.01506 ՀԵԿՏԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով, 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և ևփոփոխություններ կատարելու մասին» 397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով և մինչև վերջինիս ուժի մեջ մտնելը գործող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ և 35-րդ կետերով, հիմք ընդունելով Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի թիվ 32-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Տեղ համայնքի բնակիչ Դավիթ Ղուլունցի 2020 թվականի սեպտեմբերի 16-ի դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի, Տեղ բնակավայրի Արցախի խճուղի թիվ 13/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման գոտում, Դավիթ Ղուլունցի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն գրանցված 150,6քմ արտաքին (122,6քմ ներքին) մակերեսով շինությունը (կադաստրային ծածկագիր՝ 09-101-0060-0026, վկայական՝ N20122024-09-0018) (150,6x7866=1184620) մեկ միլիոն մեկ հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր քսան ՀՀ դրամով և 0.01506հա մակերեսով սպասարկման հողատարածքը (150,6x514,8=77529) յոթանասունյոթ հազար հինգ հարյուր քսանինը ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Դավիթ Արամայիսի Ղուլունցին (ծնված 1976թ.):

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **ԱՐԱՄ ՄԻՐԶՈՅԱՆ**

2025թ. հունիսի 05
գ.Տեղ